Պ-1080-20.05.2025-ՊԱ-011/0

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 124-*րդ* հոդվածում*ը* ~~առաջարկվում է ավելացնել 40-րդ մաս և այն շարադրել հետևյալ խմբագրությամբ.~~ *լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 31.1-ին մասով.*

«~~**Հոդված 124 Տրանսպորտային միջոցների վարորդների կողմից ճանապարհային նշանների կամ ճանապարհային գծանշումների պահանջները չկատարելը՝**~~

~~40.~~ *«31.1.* «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ օրենքի 19-*րդ* հոդվածի 4-րդ մասով *նախատեսված դեպքերում, երբ լրացվում է համաձայնեցված հայտարարագիր,* և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ օրենքի 24-րդ հոդվածի ~~4.1-ին մասի 2-րդ կետի «ա» և «բ» պարբերություններով~~ *4.4-րդ մասով* նախատեսված դեպքերում, միայն երկու ավտոտրանսպորտային միջոցների մասնակցությամբ պատահարի պահից քսան րոպեների ընթացքում պատահարի վայրը չթողնելը և ավտոտրանսպորտային միջոցը օրենքով չարգելված այլ վայր չտեղափոխելը, եթե ավտոտրանսպորտային միջոցը պատահարի հետևանքով չունի այնպիսի տեխնիկական անսարքություն, որի առկայության դեպքում արգելվում է դրա շահագործումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսնապատիկի չափով: *»:*

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում ~~պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը~~ *2025 թվականի սեպտեմբերի 1-ից*: